

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Պարտադիր ժամկետային զինծառայող Գեղամ Ռոբերտի Սերգոյանի մահվան հանգամանքների և դրանց քննության վերաբերյալ

ՍԵՐԳՈՅԱՆ ԳԵՂԱՄ ՌՈԲԵՐՏԻ

Ձորակոչվել է 2006թ. հունիսին Մասիսի զինկոմիսարիատից
Ծառայության է անցել ՀՀ ՊԲ թիվ 37673 զորամասում /Սրբեփանակերպ/

1. Մահվան պատճառների պաշտոնական վարկածը.

ՀՀ ՊԲ թիվ 37673 զորամասի դասակի հրամանատար, Հենրիխ Գարիի Գրիգորյանը 2007թ. ապրիլի 15-ին նշանակված լինելով զորամասի հերթապահ, ժամը 21:40-ի սահմաններում հերթապահության սենյակում տեսնելով նույն զորամասի ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Գեղամ Ռոբերտի Սերգոյանին, որը հեռուստացույցով ցուցադրվող հաղորդման առթիվ փորձել է կատակել իր հետ, դիտողություն է արել նրան առանց թույլտվության հերթապահության սենյակ մտնելու համար և չնայած Գ.Սերգոյանի կողմից դիտողությունն ընդունելու և սենյակից դուրս գալու փորձին, նրա կատակը որպես վիրավորանք ընկալելով, անցել է պաշտոնական լիազորությունների սահմանը, հայիոյանքներ է տվել նրա հասցեին, բռնություն գործադրելով հրել է դեպի սենյակի պատը, և խուլիգանական դրդումներով, սպանելու դիտավորյալ պատյանից հանել է հերթապահությունը կրելու համար իրեն ամրակցված "Մակարով" տեսակի ատրճանակը, լիցքավորել այն և կրակոց արձակել Գեղամ Սերգոյանի ստորին ծնոտի ձախ կեսի անկյան շրջանին՝ նրան զրկելով կյանքից:

Փաստի առթիվ նախ հարուցվել է ՀՀ քր. օր-ի 375 հոդվածի 1-ին մասով (*իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը*) և 34-104 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (*սպանության փորձ*) քրեական գործ, իսկ հետագայում այն վերաորակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով (*խուլիգանական դրդումներով կատարված դիտավորյալ սպանություն*) և 375 հոդվածի 1-ին մասով (*իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը*): Կայացվել է և օրինական ուժի մեջ է մտել դատարանի դատավճիռ:

2. Մահվան պատճառների դիմումատուի վարկածը.

Ըստ Գեղամ Սերգոյանի հոր՝ Ռոբերտ Միրզոյանի, իր տղային սպանել է ոչ միայն Հ. Գրիգորյանը, այլ այն կատարվել է մի խումբ անձանց կողմից, հետևաբար և հանցագործությունը ամբողջովին բացահայտված չէ:

3. Գործի քննությունը ներկայումս հետևյալ փուլում է.

Նախաքննությունը ավարտվել է քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Դատական երեք ատյաններում քննվելուց հետո դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ, ըստ որի Հ.Գրիգորյանը դատապարտվել է 15 տարվա ազատազրկման: Ներկայումս քաղաքացին դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

4. Գործի քննության /հետաքննության, նախաքննության, դատաքննության և այլն/ ընթացքում տեղ գտած թերացումները, ըստ դիմումատուի.

- Ստեփանակերտի զինվորական հոսպիտալի պետը՝ քննիչին ուղղված գրությամբ նշում է նաև ծնոտի կոտրվածքի մասին, սակայն նախաքննությունը այդ հարցին չի անդրադարձել,
- քննիչի կողմից կայացված դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ փորձագետին է ուղարկվել թվով 3 ռենտգեն լուսանկարներ, որոնց թե դատաբժշկական գիտագործնական կենտրոնում և թե նախաքննության ընթացքում անդրադարձ չի կատարվել,
- Գեղամ Սերգոյանի հիվանդության պատմության մեջ նշված որոշ փաստեր կեղծված են,
- առանց պատշաճ ձևակերպման և փաթեթավորման (որպես իրեղեն ապացույց) հանցագործության գործիք հանդիսացող ատրճանակը և Գ. Սերգոյանի մարմնից դուրս բերված գնդակը ուղարկվել է փորձագիտական կենտրոն,

5. Դիմումատուի առաջարկները քննության բավարար արդյունքներ ստանալու համար.

Ձեռնամուխ լինել բոլոր մեղավոր անձանց հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:


Քննության առարկա դարձնել նախաքննություն իրականացնող անձանց գործողությունների հակաօրինականությունը և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

6. Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկները ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին

- Հարցապնդմամբ դիմել ՀՀ զինվորական դատախազին՝ դիմումատուի կողմից մատնանշված կեղծիքների և այլ ապացույցների հիման վրա նյութեր նախապատրաստելու և դրանց ընթացքը լուծելու նպատակով:
- Հարցում կատարել ՀՀ ՊՆ քննչական ծառայությանը՝ դիմումատուի կողմից ներկայացված թերությունների վերաբերյալ:

Ծանոթագրություն: Սույն տեղեկանքում ներկայացված վարկածները, ենթադրությունները, եզրակացությունները, պնդումներն ու առաջարկությունները, բացառությամբ սույն տեղեկանքի 6-րդ կետում ներկայացվածների, չեն կարող որևէ դեպքում ներկայացվել որպես ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գնահատականներ կամ դիրքորոշումներ:

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ՝
ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ



ԳԻՄՈՒՄԱՏՈՒ՝
ՌՈԲԵՐՏ ՄԻՐՁՈՅԱՆ
(Գեղամ Սերգոյանի հայրը)

